ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

" 16 " ապրիլի 2012թ № 43 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՆԱՁՈՐ, ԱՐԵՎԻՍ, ՇՎԱՆԻՁՈՐ, ԽՈԶՆԱՎԱՐ, ՔԱՐԱՇԵՆ, ՏԱՆՁԱՏԱՓ, ՏՈՐՈՒՆԻՔ, ԳԵՏԱԹԱՂ, ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ, ՆՈՐԱՎԱՆ, ԱԼՎԱՆՔ, ՈՐՈՏԱՆ (ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ), ՇՈՒՌՆՈՒԽ, ԵՂԵԳ, ՆԺԴԵՀ, ՍՎԱՐԱՆՑ, ԲԱՐՁՐԱՎԱՆ, ՎԵՐԻՇԵՆ, ԳԵՂԻ, ԾԱՎ, ՄՈՒՑՔ ԵՎ ՔԱՇՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության 1998թ. մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի 26-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ–728 հրամանագրի 1.13. կետի դ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. հոկտեմբերի 12-ի «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթներով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի «ՀՀ Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» N 133 «Ա» որոշման պահանջների և ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձոր, Արևիս, Շվանիձոր, Խոզնավար, Քարաշեն, Տանձատափ, Տորունիք, Գետաթաղ, Նոր Աստղաբերդ, Նորավան, Ալվանք, Որոտան (Գորիսի տարածաշրջան), Շուռնուխ, Եղեգ, Նժդեհ, Սվարանց, Բարձրավան, Վերիշեն, Գեղի, Ծավ, Մուցք և Քաշունի գյուղական համայնքներում կատարված պլանային ստուգմամբ արձանագրված արդյունքների,

ո ր ո շ ու մ եմ՝

1. Ընդունել ի գիտություն ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձոր, Արևիս, Շվանիձոր, Խոզնավար, Քարաշեն, Տանձատափ, Տորունիք, Գետաթաղ, Նոր Աստղաբերդ, Նորավան, Ալվանք, Որոտան (Գորիսի տարածաշրջան), Շուռնուխ, Եղեգ, Նժդեհ,

Սվարանց, Բարձրավան, Վերիշեն, Գեղի, Ծավ, Մուցք և Քաշունի գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգման արդյունքները՝ համաձայն կազմված արձանագրության /կցվում է/:

2. Քաղաքաշինական գործունեության բնագավառում առկա խնդիրներին սահմանված կարգով լուծում տալու նպատակով վերոհիշյալ գյուղական համայնքների ղեկավարներին առաջարկվում է.

1) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել համայնքների վարչական տարածքներում հողահատկացման, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման, դրանց նախագծերի հաստատման, համաձայնեցման, ինչպես նաև ինքնակամ շինարարությունների կասեցման և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ տարվող գործընթացները՝ ապահովելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը.

2) քաղաքաշինական գործունեության պլանային ստուգման արդյունքները քննարկել համայնքի ավագանու նիստում.

3) ձեռնարկված միջոցների մասին սահմանված կարգով նախատեսված ժամկետներում տեղյակ պահել ՀՀ Սյունիքի մարզպետարան:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. ապրիլի 16
ք. Կապան